ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

29 Հունվար, 2019 թ.
№ 1 (1035)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 53-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՇՆՈՐՀԱՎՈ՛Ր ՏՈՆԴ, ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿ

1992 թվականի հունվարի 28-ին ընդունվեց պատմական որոշում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության վերաբերյալ», որով էլ հիմք դրվեց հայոց ազգային բանակի ստեղծմանը:

Այսօր մենք ունենք մարտունակ բանակ, որն անցել է բազում փորձությունների միջով, հաղթահարել իր ճամփին հանդիպած խոչընդոտները:

Սահմանին կանգնած հայ զինվորը պատվով ու փառքով է պաշտպանում մեր հողն ու սահմանները, գիտակցում է իր պարտքը հայրենիքի հանդեպ և մեծագույն պատասխանատվությամբ է վերաբերվում իր ծառայությանը:

Շնորհավո՜ր տոնդ, հայո՛ց բանակ, շնորհավո՜ր տոնդ, հա՛յ զինվոր: Թող քո ծառայությունը մշտապես լինի սուրբ պարտականություն հայ ազգի ու նրա հարատևող պատմության հանդեպ: Խաղաղ արշալույսներ քեզ և անփորձանք ծառայություն:

ԲՈՒՀԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԸ՝ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մանկավարժական համալսարանում հունվարի 25-ին տեղի ունեցավ հոգաբարձուների խորհրդի նիստ, որը բացեց բուհում 30 տարի աշխատած արվեստագիտության դոկտոր Հրավարդ Հակոբյանը: Օրակարգում 2018 թվականի հաշվետվությունն էր և Խորհրդի նախագահի ընտրությունը:

Խորհրդի նախագահի համար առաջադրվեց ՀՀ ԿԳ նախարարության Լեզվի պետական կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանի թեկնածությունը, ում օգտին էլ ներկաները բաց քվեարկությամբ միաձայն քվեարկեցին, իսկ Խորհրդի քարտուղար ընտրվեց ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Անժելա Գաբրիելյանը:

Դավիթ Գյուրջինյանը հանգամանորեն ներկայացրեց իր կենսագրությունն ու գիտական գործունեությունը: Նա ծնվել է 1962 թվականին Երևանում, ոսկե մեդալով ավարտել է դպրոցը և ընդունվել Մանկավարժական համալսարան: Բուհն ավարտելուց հետո իր գործունեությունը շարունակել է այստեղ, պաշտպանել թեկնածուական: Տարբեր տարիների աշխատել է նաև Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանում և Գևորգյան ճեմարանում: Այժմ Լեզվի պետական կոմիտեի նախագահն է:

Խորհրդի նորընտիր նախագահը հպարտությամբ բարձրաձայնեց, որ ինքն այս հեղինակավոր բուհի շրջանավարտն է, շնորհակալ է իր դասախոսներից, որոնց շնորհիվ այսօր տեղ է զբաղեցնում հայագիտության ոլորտում:

«39 տարի անց ինձ ընտրում են Մանկավարժական համալսարանի Հոգաբարձուների խորհրդի նախագահ, շնորհակալ եմ, կփորձեմ պարտքերս հետ տալ»,- ասաց բուհի հետ մշտապես կապը պահպանած գիտնականը՝ վստահեցնելով, որ այս պաշտոնում ➤2

Սիլվա Կապուտիկյան 100

ԴԵՌ ՀԱՎԱՏԱ՞

Դու՝ փորձաքար իմ ժողովուրդ...
Ինչքան էլ որ խոր մոլորվես,
Երկրպագես կուռքերին սուտ,
Ես մոր նման ներում եմ քեզ:

Դու՝ տաքգլուխ Սասնա Դավիթ,
Դու՝ իմաստուն Սասնա Մեր,
Թեկուզ և ծեր ու ալեհեր,
Բայց մնում ես դու միամիտ:

Հավատացիր, թե հիրավի
Գարին դարձավ ընկուզաչափ,
Ու դուրս եկար քարանձավից
Ու խաբվեցիր դու չարաչար:

Այնքան դառն է կյանքդ ու գորշ,
Ու գալիքդ իրականում,
Որ փակում ես աչքդ ու քո
Խաբկանքին ես ապավինում:

Ու տեսնում ես ամեն ի՛նչ վառ,
Թև ես առնում չեղած տեղից,
Նորոգվում ես բնազդաբար
Ու հառնում ես մոխիրներից:

Քո խաբվելն է քեզ պահպանում,
Ու հին խոսքդ՝ «Աստված կտա».
Դու՝ միֆերով ապրող մանուկ,
Դեռ հավատա՞, դեռ հավատա՞...

ԲՈՒՀԻ ԾՐՋԱՆԱՎԱՐՏԸ՝ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

➢1 արդեն իր հանդիպումները ՀՊՄՀ ղեկավարության, դասախոսական կազմի և ուսանողության հետ պարբերական կլինեն և իր նպաստը կբերի համալսարանի առաքելության իրականացմանը:

«Դավիթ Գյուրջինյանին այսօր վստահված է իրականացնելու լեզվի պետական քաղաքականությունը և նրա ներկայությունն ու դերակատարությունը այս կարևոր կառույցում լիովին համապատասխանում է բուհի բարի համբավին ու առաքելությանը»,-ասաց Խորհրդի անդամ, ՀՊՄՀ հեռուստառադիոլրագրության ամբիոնի վարիչ Լևոն Գալստյանը:

Դ. Գյուրջինյանի գիտամանկավարժական գործունեության և մարդկային որակների մասին խոսեցին նաև ներկա գտնվող գործընկերները՝ փաստելով նրա մեծ ավանդը լեզվաբանության ասպարեզում:

«Համոզված եմ, որ Ձեր աշխատանքը բեղուն կլինի և հանձին Ռուբեն Միրզախանյանի ձեր կողքին կունենաք հմուտ ղեկավարի և լավ գիտնականի»,- նորընտիր նախագահին դիմեց Հրավարդ Հակոբյանը:

Խորհրդի նորընտիր նախագահին շնորհավորեց նաև Մանկավարժական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը. «Մեծ պատիվ է մեծանուն, ազնիվ գիտնականին և բուհի շրջանավարտին տեսնել այս կարևոր ու պատասխանատու պաշտոնում»:

Խորհրդի անդամները դիտեցին 2018 թվականին բուհում կատարված աշխատանքների մասին պատմող տեսաֆիլմ, այնուհետև լսեցին ՀՊՄՀ ռեկտոր Ռ. Միրզախանյանի հաշվետվությունը բուհում կատարված աշխատանքների, ֆինանսական ելքերի և մուտքերի, դրանց դինամիկայի և տարբեր տարիների հետ համեմատությունների մասին: Զեկուցողն ընդգծեց, որ ծախսերի «առյուծի բաժինը» կազմում է աշխատավարձը:

Ռեկտորը խոսեց վերջին տարիներին համալսարանում ուսման վարձերի պահպանման, դասախոսներին չկրճատելու միտումով ծավալների իջեցման, աշխատողների բժշկական ապահովության, միջազգային կապերի ընդլայնման, ֆինանսների նպատակային օգտագործման, բարձր հարկերի, հանրակացարանային շենքի կառուցման անհրաժեշտության և այդ հարցում արտերկրից ներդրողների հետ բանակցությունների և այլ կարևոր հարցերի շուրջ:

Ռեկտորը տեղեկացրեց, որ համալսարանի Գիտական խորհուրդը ուսման վարձերը միջինը 30 տոկոսով բարձրացնելու որոշում է կայացրել՝ հաշվի առնելով ֆակուլտետների առանձնահատկությունները և նկատի ունենալով ուսանողների՝ տարեցտարի նվազող քանակը:

Ներկաները տարբեր հարցեր ուղղեցին Ռ. Միրզախանյանին. դրանք վերաբերում էին միջազգային գործունեության արդյունքում ձեռքբերումներին, շրջանավարտների զբաղվածության վիճակագրությանը, հեռավար կրթության կազմակերպմանը, պրակտիկայի բարեփոխումներում նոր մոդելների մշակմանը, բուհը գրավիչ դարձնելուն, վարձավճարների բարձրացման ռիսկերին և այլն:

Ռուբեն Միրզախանյանը համոզիչ փաստարկներով ներկայացրեց բուհի կարևոր ձեռքբերումները՝ պատասխանելով Խորհրդի նոր անդամների՝ ՀՀ ԿԳ փոխնախարար Արևիկ Անափիոսյանի և մյուսների հարցերին:

Օուլուի համալսարանի հետ համագործակցության արդյունքում վերանայվել են ուսումնական ծրագրերը, Իմաստությունե փիլիսոփայական հանդեսն ընդգրկվել է միջազգային գիտաչափական շտեմարանում, ուսումնական ծրագրերը թարգմանելու քայլեր են արվում՝ օտարերկրյա դիմորդներ ներգրավելու համար:

Համալսարանի առաջընթացի ու զարգացումների մասին խոսեցին գիտահետազոտական կենտրոնի տնօրեն Կամո Վարդանյանը և ուսանողուհի Անժելա Գաբրիելյանը:

Մանկավարժության ոլորտում խնդիրներ կան, իսկ անելիքները շատ են, դրանք պետք է լուծել հանատեղ ջանքերով: Միանգամայն տեղին նկատեց բուհի ռեկտորը՝ ուսուցիչների և դասախոսների աշխատավարձերը չեն համադրվում նրանց աշխատանքի բովանդակությանը:

Խորհրդի անդամները ցանկություն հայտնեցին հանդիպումները դարձնել պարբերական՝ քննարկելու լավ աշակերտ և ուսուցիչ ունենալու հարցի շուրջ անելիքները, ցուցաբերելու պետական մոտեցում այդ խնդրին:

Նիստի ավարտին մանկավարժական համալսարանի Խորհուրդը 2018-ին կատարված աշխատանքները գնահատեց բավարար, ինչպես նաև հաստատեց համալսարանի 2019-ի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը, հակակոռուպցիոն ռազմավարության ծրագիրն ու 2018-ի հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման հաշվետվությունը:

Մանկավարժական համալսարանն այսուհետ ևս կշարունակի զարգացումներ արձանագրել ժամանակին համաքայլ՝ փոքր, բայց հաստատուն քայլերով կերտելով մանկավարժական կադրեր պատրաստող կրթական հաստատության իր առաքելությունը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔ-ՀԱՅԱՍՏԱՆ

«ՔՈՒՎԵՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՆԵՐԻ ՍՓՅՈՒՌՔՆ Է»,

-ասում է Կարո Առաքելյանը

Մեր հարցազրույցը Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող, սիրիահայ, Քուվեյթի ազգային վարժարանի փոխտնօրեն Կարո ԱՐՍԼԱՆՅԱՆԻ հետ:

- Մի փոքր կպատմե՞ք Ձեր մասին:

- Բնիկ սիրիահայ եմ, ծնվել եմ Հալեպում, կրթությունս ստացել եմ Քարէն Եփփէ ազգային վարժարանում, որը պատմության մեջ ծանրակշիռ ավանդ ունի, ապա ընդունվել և ավարտել եմ Սիրիայի պետական համալսարանի (Հալեպ) քիմիագիտական ֆակուլտետը: Աշխատանքի եմ անցել Քարէն Եփփէ վարժարանում որպես քիմիայի և ֆիզիկայի ուսուցիչ: Չորս տարի Հալեպում աշխատելուց հետո հրավիրվել եմ Քուվեյթի դպրոց՝ վարչական աշխատանքի: 12 տարի աշխատել եմ որպես փոխտնօրեն, նաև հայոց լեզվի և գրականության, պատմության ուսուցիչ: Չզարմանաք, որ համադրել եմ բնական և հումանիտար գիտությունները: Տարիներ շարունակ ես զբաղվել եմ գրականությամբ, սփյուռքյան մամուլում հանդես եմ եկել հոդվածներով, ունեմ նաև բանաստեղծությունների գիրք:

- Պատմեք, խնդրեմ, Քուվեյթի կրթական հաստատության մասին: Ովքե՞ր են սովորում այստեղ, ի՞նչ ծրագրերով ու դասագրքերով: Եվ, ընդհանրապես, ի՞նչ դեր ունի Սփյուռքում այդ հաստատությունը:

- Նախ պետք է անդրադառնալ Քուվեյթի պատմությանը: Այսպիսի խոսք կա՝ Քուվեյթի համայնքը սփյուռքների սփյուռքն է, որովհետև Քուվեյթը անապատային վայր է և այնքան էլ հարմար չէ բնակվելու համար: Սահմանակից է Իրաքին: Սկզբնական շրջանում Իրաքի Բասրա քաղաքից, որը շատ մոտ է Քուվեյթին, մի խումբ հայեր 1940-ական թվականներին եկել հաստատվել են Քուվեյթում և հիմնականում զբաղվել են նավթի և մեքենաների վերանորոգման աշխատանքներով: Ժամանակի ընթացքում՝ 50-ականներին կեսերին, Լիբանանից և Սիրիայից, մանավորապես Հալեպից, մի խումբ տղամարդիկ եկել են Քուվեյթ աշխատելու: Երիտասարդների մտահղացմամբ և Լիբանանից ժամանած Տեր Պարույր քահանա Սարգսյանի ջանքերով ստեղծվել է դպրոց և նրա կողքին՝ եկեղեցի:

Դպրոցը նախապես եղել է մանկապարտեզ՝ նախադպրոցական և մինչև միջին դասարանի աշակերտների հաստատություն: 1983-ից հետո ավագ դպրոցի անհրաժեշտություն զգացվեց: Մեր բոլոր ուսուցիչները մեծ մասամբ գալիս են Սիրիայից: Բոլոր տնօրենները կամ Սիրիայից, կամ Լիբանանից ժամանած ղեկավարներ են:

Դպրոցի ուսուցչական կազմը մեծամասամբ հայեր են՝ հիմնականում եկած Սիրիայից, նաև Լիբանանից, բայց թվաբանության, քիմիայի, ֆիզիկայի առարկաները երբեմն դասավանդում են ոչ հայեր, որոնք արաբ սիրիացիներ են:

- Ի՞նչ դասագրքերով են դասավանդվում հայերեն առարկաները:

- 12 տարի այնտեղ լինելով, կասեմ, որ սկզբում, 1-6-րդ դասարաններում, մենք դասավանդում էինք հայտնի լեզվաբան, պատմաբան, քեսաբահայ հայտնի մտավորական Հակոբ Չոլաքյանի, այնուհետև՝ Մուշեղ Իշխանի դասագրքերով: Սակայն սիրիական պատերազմի պատճառով մենք սիրիահայ Հ. Չոլաքյանի բոլոր դասագրքերը փոխեցինք Կարո Առաքելյանի և նրա կնոջ՝ Աղավնի Ֆստքջյանի դասագրքերով: Առավել հիմնավոր պատճառն այն էր, որ փակվեցին Սիրիայի սահմանները և Հ. Չոլաքյանի գրքերը բերել հնարավոր չէր: Այդ գրքերը, պետք է ասել, մեզ շատ օգնեցին: 2011 թվականից մենք արդեն փոխել ենք մեր դասագրքերը և անցնում ենք Կարո Առաքելյանի դասագրքերով: Այդ բոլոր գրքերն, անշուշտ, գրված են արևմտահայերեն լեզվով:

- Իսկ ո՞ւր են գնում Ձեր շրջանավարտները:

- Տարեկան ունենում ենք 20-30 շրջանավարտ: Երբ հիմնադրում էինք ավագ դպրոցը, մենք ընտրեցինք Քուվեյթի պետական ծրագիրն արաբերեն լեզվով, որովհետև ավարտելուց հետո մեր բոլոր շրջանավարտները մեկնում են Սիրիա, որտեղ կրթական համակարգը մինչև այսօր գրեթե անվճար է: 80-90 տոկոսը գնում էր Սիրիա, որտեղ կրթական մակարդակը շատ բարձր է: Սակայն վերջին շրջանում նկատեցինք, որ սիրիական պատերազմի պատճառով մեր շրջանավատները կամ գալիս են Հայաստան, կամ նախընտրում են Ամերիկան, կամ մի այլ երկիր: Ովքեր նյութական հնարավորություններ ունեն, մնում են երկրում և շարունակում կրթությունը անգլերեն լեզվով:

Մեր հաստատությունը կոչվում է Քուվեյթի ազգային վարժարան՝ 10,11,12-րդ դասարաններով: Մի շենքում մենք ունենք երկու դպրոց. Միացյալ վարժարան, որը ավագ դպրոցն է՝ Քուվեյթի պետական ծրագրով, արաբերեն լեզվով, և ունի իր հատուկ համակարգը, մյուսը՝ միջին և տարրական դպրոցն է, որը կոչվում է հայկական դպրոց. այստեղ մենք ավելի ազատ շարժվելու՝ մեր ժամանակացույցերը կազմելու հնարավորություն ունենք:

- Ինչպիսի՞ն է տեղի հայկական համայնքը: Որքա՞ն հայ է ապրում Քուվեյթում:

- Մեր համայնքը նաև կոչվում է Քուվեյթի և շրջակայից հայոց թեմ, որ ենթակա է ուղղակի Անթիլիասի կաթողիկոսությանը: Ինչու շրջակայից, որովհետև այստեղ ընդգրկված են նաև հարակից Բահրենի 200-300 հայեր: Ցավոք, Բահրենի մեջ մենք չունենք ոչ դպրոց, ոչ էլ եկեղեցի: Այնտեղ Սրբազան հայրը ամիսը մեկ անգամ պատարագ է մատուցում, կազմակերպում ընկերային հավաքներ: Մեր թեմը ավելի կայուն է, տարիների ընթացքում դարձել է 4 հազար հայություն, նախքան իրաքյան ներխուժումը եղել է 10 հազար հայ: Շատերը

➢3

Լույս է տեսել ՀՊՄՀ ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանի «ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920-1932 ԹԹ.» գիրքը:

Գիրքը հրատարակվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ և նախատեսված է պատմաբանների, մշակույթի գործիչների, ուսանողների, ընթերցողների լայն շրջանի համար:

Աշխատանքում ներկայացված են մշակութային կյանքի առանձնահատկությունները Հայաստանում խորհրդային իշխանության առաջին տարիներին: Մի կողմից՝ ուշադրություն է հատկացվել խորհրդահայ պետական գործիչների՝ մշակույթի հանդեպ ունեցած առանձնահատուկ վերաբերմունքին, մյուս կողմից՝ ընդգծվել է կոմունիստական գաղափարախոսության առկայությունը մշակութային կյանքում: Արժևորված են մշակույթի ասպարեզում ունեցած ձեռքբերումները, որոնք հիմք հանդիսացան ոլորտի հետագա զարգացման համար»:

Գրքի առաջաբանում, որը գրել է պատմական գիտությունների դոկտոր Ամատունի Վիրաբյանը, կարդում ենք. «1920-1930-ական թվականներին, ինչպես ողջ Խորհրդային Միությունում, այնպես էլ նրա մասը կազմող Խորհրդային Միությունում տեղի ունեցավ հզոր մշակութային տեղաշարժ: Երկու տասնամյակների ընթացքում մշակութային վերափոխումները փոխեցին միլիոնավոր մարդկանց առօրյա կյանքը: Անհավատալի կարճ ժամանակամիջոցում մարդկանց նյութական հնարավորությունները դադարեցին արգելք հանդիսանալ շփվելու մշակույթի հետ, այդ շփումը դադարեց կախված լինել մարդկանց սոցիալական և մասնագիտական կարգավիճակից: Ե՛վ ծավալի, և՛ թափի առումով այդ փոփոխությունները իրոք կարելի է համարել համաժողովրդական «կուլտուրական հեղափոխություն»:

Քննարկվող ժամանակաշրջանում երկրում մշակութային կյանքի զարգացումն ունեցել է բարդ և հակասական բնույթ: Սակայն դրա հետ մեկտեղ մշակութային կյանքի մի շարք բնագավառներում ձեռք բերվեցին նշանակալից հաջողություններ: Դրանց թվին առաջին հերթին դասվում է կրթության ոլորտը:

Ռուսական կայսրությունից պատմական ժառանգություն էր մնացել անգրագետ բնակչության մի հսկա զանգված: Մինչդեռ երկրի արագ ինդուստրացման անհրաժեշտությունը պահանջում էր մեծ թվով գրագետ արտադրական աշխատողներ:

Խորհրդային իշխանությունների նպատակամղված ջանքերը, որ սկսվեցին 1920-ական թվականների կեսերից, հանգեցրին նրան, որ երկրում, այդ թվում Հայաստանում գրագետ բնակչության ծավալը անընդհատ աճում էր: 1939 թ. Հայաստանում մինչև 50 տարեկան բնակչության շրջանակներում գրագետներն արդեն կազմում էին մոտ 85 տոկոս:

1920-ական թվականներին սկսեց ձևավորվել խորհրդահայ գրականությունը: Դրա կայացման ճանապարհին ձևավորվեցին տարբեր ուղղություններ ու խմբակներ: Սակայն 1930-ական թվականների սկզբներին ազատ ստեղծագործող խմբակների և խմբերի գործունեությունը դադարեցվեց: ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1932 թ. ապրիլի 23-ի որոշմամբ դրանք լուծարվեցին, իսկ 1934 թ. խորհրդային գրողների 1-ին համամիութենական համագումարում կազմավորվեց գրողների միություն, որտեղ ստիպված էին մտնել բոլոր այն մարդիկ, որոնք զբաղված էին գրական աշխատանքով: Գրողների միության անդամ չլինել չէր կարելի. Այդ դեպքում զրկվում էին հրատարակվելու հնարավորությունից:

Գրողների միությանը զուգահեռ ստեղծվեցին ստեղծագործական այլ միություններ՝ «նկարիչների միություն», «ճարտարապետների միություն», «կոմպոզիտորների միություն»: Խորհրդային արվեստում սկսվեց միօրինակաբարության ժամանակաշրջանը:

Այս և 1920-30-ական թվականների խորհրդահայ մշակութային կյանքի բազմաբնույթ ելևէջներին է նվիրված պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Միրզախանյանի սույն ուսումնասիրությունը: Հեղինակը հիմնականում նորահայտ արխիվային փաստաթղթերի և այլ նյութերի հիման վրա ներկայացնում է այն դժվարին և բարդ ուղին, որով անցել է խորհրդահայ մշակույթն իր կայացման առաջին տասնամյակի ընթացքում: Ճանաչված մշակութային գործիչների կողքին ձևավորվում էր նոր խորհրդահայ մտավորականությունն իր ուրույն աշխարհայացքով, 1920-ական թվականների հարաբերական ազատությամբ, որ, սակայն, կամաց-կամաց բախվելու էր կոմկուսակցության հարձակողական գաղափարախոսության հետ: Այնուհանդերձ, առկա էր մշակութային կյանքի հզոր վերելքը, որը լավագույնս արտացոլված է Մարիետա Շահինյանի հետևյալ տողերում. «Ստեղծագործաբար օժտված առանձին անձնավորությունների ջերմ ռոմանտիզմով, որոնք ոչ միայն մեր միության, այլև Եվրոպայի ու Ամերիկայի բոլոր ծայրերից հավաքվել էին Արարատի երկու գլուխների հովանու տակ փռված փոքրիկ, դեղին, ամայի, քաղաքում՝ նախկին գավառական Երևանում: Այդ մարդիկ...երազում էին իրենց ստեղծագործական եռանդով և շինարարության պաթոսով համակված՝ երիտասարդ խորհրդային իշխանությանը ցույց տրվող իրենց օգնությամբ Հայաստանի մշակույթի հիմքերը դնել արվեստի ու տեխնիկայի բոլոր բնագավառներում»:

ՔՈՒՎԵՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԸ...

➢2 հեռացան տարբեր երկրներ իրաքյան ներխուժումից հետո, և այսօր մեր թիվը նոսրացել է:

- Իսկ ի՞նչ խնդիրներ ունեք դպրոցում, դրանք լուծելի՞ են...

- Այսօրվա կրթահամակարգը ամբողջ աշխարհում կտրուկ փոփոխվել է, մանկավարժական աշխարհում ևս կրթական տեխնոլոգիաները նոր, կտրուկ շրջադարձ են կատարել: Դպրոցի տնօրեն դոկտոր Ներսես Սարգսյանի գլխավորությամբ մենք փորձում ենք կապեր ստեղծել Հայաստանի քույր դպրոցների հետ, մասնավորապես Անանիա Շիրակացի ճեմարանի հետ, որը կրթական բավականին մեծ ճանապարհ է անցել: Նոր քայլեր, մեթոդական աշխատանքներ ենք ձեռնարկել, հետևաբար այս ուղղությամբ դպրոցում կազմակերպել ենք մանկավարժական սեմինարներ, հատուկ հանդիպումներ Շիրակացի դպրոցի աշխատակազմի հետ, հրավիրել ենք փոխտնօրենին:

Ամենակարևորը նյութական խնդիրն է, թեև մեր դպրոցը ինքնաբավ է: Մեզ մոտ ուսումը վճարովի է:

- Սփյուռքահայերը ցանկություն ունե՞ն վերադառնալու նոր Հայաստան:

- Այո, վերադառնալու միտումը նկատելի է: Առայժմ Քուվեյթից և Սիրիայից մի խումբ շինարարներ Հայաստանում՝ Վերին Անտառայինի տարածքում շինարարական աշխատանքներ են կատարում: Նրանցից շատերը Հայաստան են բերել նաև իրենց ընտանիքների անդամներին: Չեմ կարող ասել՝ վերջը ինչպես կլինի, նրանք վերջնականապես կհաստատվե՞ն Հայաստանում՝ ցույց կտա ժամանակը:

Ես էլ ընտանիքս մի քանի տարի է՝ փոխադրել եմ Երևան, և երեխաս սովորում է Անանիա Շիրակացու դպրոցում: Ես առայժմ աշխատում եմ Քուվեյթի դպրոցում, գալիս-գնում եմ:

- Ո՞ր առանձնահատկություններով են հատկապես տարբերվում Սփյուռքի և Հայաստանի հայերը:

- Կենցաղային տարբերություններ կան, բայց հարստությունը բազմերանգության մեջ է:

Այսօր մեր ժողովրդի մեջ խանդավառություն կա: Բայց գիտականությամբ պետք է վերաբերվել իրականությանը: Ես որպես մարդ և մանկավարժ՝ լավատես եմ. Հայաստանում եղածը ողջունելի քայլ է, բայց ոչ ամբողջական: Մեզ ինքնահաստատում է պետք, որքանո՞վ ենք մենք տիրապետում իրականությանը...Ես հավատում եմ, որ երկխոսությունն է բոլոր հարցերը լուծելու և հարթելու իրական ճանապարհը:

Մենք պետք է ունենանք մեր յուրահատկությունը, և այդ յուրահատկությունը մեր ազգային ժառանգությունն է: Որովհետև մենք փոքր ենք թվով, սակայն մեծ ենք ազգային մշակույթով:

- Դուք ՀՊՄՀ հայցորդ եք: Ինչո՞ւ եք ընտրել հենց տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտությունը:

- Ես 10 օրից ավարտում եմ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մագիստրատուրան. թեզս արդեն պատրաստ է: Ղեկավարս պրոֆեսոր Անդա Թոփուզյանն է: Մեծ ցանկություն ունեմ Սփյուռքի կրթական ծրագրում կտրուկ փոփոխություններ անել, որովհետև մեր ծրագրերը նոր իրականության հետ աղերսներ չունեն:

Նաև ծանոթ էի բուհի թերթին, բայց ժամանակ չէի գտնում հանդիպելու. այնքան զբաղված եմ, մեկ ամսվա մեջ արդեն երրորդ անգամ Հայաստան եմ գալիս:

Ուզում եմ համալսարանի աշխատակազմին և թերթին մաղթել հաջողություններ:

Զրուցեց Սիլվա ԱՍՐՅԱՆԸ

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆԻՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Խ. Աբովեանի ան. Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի Վ. Պարտիզունու անուան հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնը եւ «Սփիւռք» Գիտաուսումնական կենտրոնը լոյս են ընծայել 2018 թ. Մայիսի 18-ին կայացած Հայաստանի Առաջին Հանրապետութեան 100-ամեակին նուիրուած գիտաժողովի նիւթերի ժողովածուն:

Այն բաւական ընդգրկուն է. համապարփակ կերպով ներկայացնում է Հայաստանի Առաջին Հանրապետութեան գրամշակութային, կրթական կեանքը, պատմական-քաղաքական հարուստ իրադարձութիւնները:

Հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնը ներկայացնող զեկուցողները (Ս. Դանիէլեան, Մ. Գիլաւեան, Ն. Խաչատրեան, Լ. Գալստեան, Ք. Աբրահամեան) մանրամասնօրէն քննութեան են ենթարկել Առաջին Հանրապետութեան շրջանի գրական եւ մշակութային կեանքը, բացայայտել քաղաքական իրադարձութիւնների գեղարուեստական արձագանգները:

Կրթական համակարգի իւրայատկութիւններին, մանկավարժական նոր մօտեցումներին եւ ժամանակի մեծագոյն մանկավարժների աւանդին են անդրադարձել ՀՊՄՀ Մանկավարժութեան տեսութեան եւ պատմութեան (Լ. Ասատրեան, Մ. Ասատրեան) եւ Մասնագիտական կրթութեան եւ կիրառական մանկավարժութեան ամբիոնների ներկայացուցիչները (Ա. Թոփուզեան, Գ. Յարութիւնեան):

Նշենք, որ ժողովածուում ընդգրկուած են Մ. Նալբանդեանի ան. Շիրակի Պետական Համալսարանից Գ. Խաչիկեանի, Վանաձորի Յովհ. Թումանեանի ան. Պետական Համալսարանից Վ. Փիլոյեանի յօդուածները:

Ժողովածուն հրատարակութեան է պատրաստել «Սփիւռք» Գիտաուսումնական կենտրոնը (պատասխանատու խմբագիր՝ Սուրէն Դանիէլեան):

ՆԵԼԼԻ ԹԱԴԷՈՍԵԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԸ

Թամարա Արմենակի Նազարյանը Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետն ավարտեց 1961 թվականին և վերադարձավ հայրենի Արանզամ գյուղ (Ասկերանի շրջան), որտեղ ավարտել էր միջնակարգ դպրոցը:

Երբ ընտանիքը տեղափոխվեց Աբովյանի շրջանի Գետաշեն գյուղ, որտեղ Թամարան սկսեց դասավանդել տեղի դպրոցում:

Ազգային ազատագրական զարթոնքի նախաշեմին՝ 1982 թվականին, Թամարայի ընտանիքը տեղափոխվեց Արցախ՝ Ասկերանի շրջանի Խրամորթ գյուղը:

1988-ին Հայաստանում միտինգներ ու ցույցեր էին էին սկսվել, իսկ Աղդամի սահմաններում անհանգիստ էր. սահմանամերձ գյուղերում թուրք ազերիները պարբերաբար փորձում էին թափանցել հայկական բնակավայրեր: Ահա ինչու մերձակա բարձունքներում գիշերները ինքանապաշտպանական ջոկատներ էին հերթապահում, և Թամարան հերթափոխում էր, բոլորի կողքին:

Հատկանշական է մի դեպք, երբ 1992 թվականի մայիսի 10-ին Աղդամի կողմից ուժեղ արձակում

սկսվեց, և հայկական ջոկատն ընկավ շրջափակման մեջ: Օրհասական վիճակում կամ պետք է գերի ընկնեին, կամ ճեղքեին թշնամու օղակը՝ կռվելով մինչև վերջին փամփուշտը: Այս դեպքում զոհվելն էր փրկությունը՝ գերի չընկնելու համար: Սակայն տեղանքին դեռ մանկուց լավ ծանոթ մանկավարժ Թամարա Նազարյանը հմտորեն ղեկավարեց նահանջը՝ առանց զոհերի ջոկատը դուրս բերելով պաշարումից: Բայց Թամարան ենթարկվեց կոնտուզիայի:

Թամարան տարբեր ջոկատների կազմում մասնակցեց մի շարք գյուղերի ազատագրման մարտերին, թրծվեց մարտերում, հիանալի տիրապետելով ռազմական տեխնիկային: Նաև բախտ ունեցավ հանդիպել լեգենդար Մոնթեին:

Թաքցնելով իր տարիքը՝ Թամարան շարունակեց իր պայքարը Արցախի արդեն կազմավորվող ազգային բանակի շարքերում: 1993-ի հունիսի 12-ին հրամանատար Մոնթեի զոհվելու պատճառով Մարտունու զորամասի մարտական նախաձեռնությունը ձախողվեց, բայց հայկական նահանջող կողմին հաջողվեց Ասկերանի մոտ կանգնեցնել թշնամուն: Թամարան այս մարտերում շատերի կյանքը փրկեց, օգնեց նահանջը կազմակերպելուն:

Նոր հակահարձակումներից հետո Աղդամն այլևս հայերի ձեռքին էր: Թամարան իր ընկերների հետ հրճվում էր՝ նկատելով թշնամու փախուստը:

Միայն թե հերոս կինը չկարողացավ իրականացնել իր նպատակը՝ հետ բերել 73-ամյա մորը, որին գերի էին վերցրել ադրբեջանցիները 1992-ի կռիվների ընթացքում:

Արանզամ-Նախիջևանիկ, Ավդալ-Գյուլափլու, Կուրապատկինո-Մուղանլու, Ամիրանլար-Խորամորթ, Ասկերան-Աղդամ, Աթափլու մարտական փառահեղ ուղին հիմա հուզմունքով է հիշում մանկավարժ Թամարան: Աթափլուում նա վիրավորվեց ոտքից: Բայց քաջ կինը հայրենիքին ծառայեց մինչև վերջ՝ 1996-ի գարունը, նորից անցնելով մանկավարժական աշխատանքի:

Նա հաճախ է այցելում Մանկավարժական համալսարանի թերթի խմբագրություն, թղթակցում թերթին՝ պատմելով իր անցած փառավոր ուղուց որոշ դրվագներ: Չի մոռանում նաև կրթական այն հաստատությունները, որտեղ աշխատել է: Դեռ հուզմունքով ու սիրով է հիշում Երևանի Խ. Աբովյանի անվան № 1 դպրոցի 1987 թվականի տնօրենին, 10-րդ դասարանի աշակերտներին, հատկապես Նորքի զանգվածից եկող Գագիկին, հմ. 84 դպրոցի 2-րդ դասարանցի Լիլիթին:

Թերթի միջոցով նա իր պատգամն է հղում մանկավարժական մեծ բանակին և հորդորում. «Համբերատար տարեք երեխաների չարաճճիությունները, ուսուցանեք այնպիսի իմաստուն ձիրքով, որ աշխարհին պարգևեք լուսավոր կյանք, ապրեք ազատ ու անվախ, ստեղծեք համերաշխ երկիր ու ապրեք ինչպես մի ընտանիքում»:

53-րդ ջոկատի 4-րդ գնդի շարքային հրաձիգ, նախկին մանկավարժ Թամարան կրում է հայրական ազգանունը՝ Նազարյան, իսկ Մինասյանը այն կնոջ ազգանունն է, որի հոգեզավակն է ինքը:

Թամարան հայ կնոջ օրինակելի կերպար է, որով հպարտանում են և՛ հայրենի Արցախում, և՛ Խ. Աբովյանի անունը կրող բուհական հաստատությունում:

«ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՍԿՍՎՈՒՄ Է ՍԱՀՄԱՆԻՑ»,-
ասում է ժամկետային զինծառայող Վարդան ԳԱԼՍՏՅԱՆԸ

- Վարդա՛ն, որտե՞ղ ես անցկացնում պարտադիր ժամկետային ծառայությունդ:

- Վեց ամսից ավելի է՝ ծառայում եմ Արցախի N զորամասում: Հպարտ եմ, որ հայոց բանակի զինվոր եմ: Կարծես կռահում էի, որ պիտի Արցախում ծառայեմ: Արցախին նվիրված երկու երգ ունեմ գրած՝ «Հայ զինվոր», «Օդաչուներ»:

- Մինչև հայկական բանակ մեկնելդ ինչպե՞ս էիր պատկերացնում բանակային առօրյան և ինպիսի՞ն այն ներկայացավ քեզ:

- Եղբայրներս ծառայել են Արցախում և Իջևանում: Հաճախ եմ այցելել նրանց: Ընկերներիս մեծ մասն արդեն ծառայել են հայոց բանակում: Նրանց հետ շփումներից ու զրույցներից բանակային առօրյան, անկեղծ ասած, ինձ ծանոթ էր: Բանակում օրդ շատ արագ է անցնում: Ունեմ շատ լավ ընկերներ Երևանից, Ստեփանակերտից, Ծաղկաձորից, Հրազդանից…

- Դպրոցում անցել ես Նախնական զինվորական պատրաստություն (ՆԶՊ). ինչ ես կարծում, այն պատանիներին պատրաստո՞ւմ է բանակային ծառայությանը:

- Իհարկե, դպրոցն օգնում է լավ քաղաքացի դառնալուն: Բայց ես կարծում եմ՝ շրջապատն ավելի է կոփում մարդուն, դարձնում խելացի ու խոչընդոտներ հաղթահարող անձ:

- Ի՞նչ կամային որակներ են պետք պարտադիր ժամկետային ծառայությունն առավել դյուրին ու պատվով հաղթահարելու համար:

- Պետք է զգոն լինես ամեն քայլափոխի և նվիրվես ընկերներիդ. նրանք քո եղբայրներն են: Երկու տարի նրանց հետ հաց ես կիսում, դիրքեր մեկնում, ուրախանում ու տխրում: Մի խոսքով՝ կյանքիդ երկու տարիները պիտի պատվով անցկացնես: Ինչպես ասում են, տասը չափես, մեկը կտրես:

- Ի՞նչ է հայրենասիրությունը՝ սե՞ր հայրենիքի հանդեպ, ազգային մտածելակե՞րպ, թե՞ կեղծ ձևակերպում, որի մասին հաճախ բարձրաձայնում են հենց նրանք, որոնք խուսափում են բանակում ծառայելուց:

- Հայոց բանակի բոլոր զինվորները արծիվներ են, որ պատրաստ են ամեն րոպե պաշտպանել Հայաստան աշխարհը: Մեր հայրենիքը սկսվում է սահմանից: Մեր սահմանները անառիկ են, մեր մայրերը՝ ապահով: Մենք այստեղ ենք, որ արշալույսները խաղաղ լինեն մեր հայրենակիցների համար:

- Ծառայությանդ ընթացքում նկատե՞լ ես բանակի ուժեղ և թույլ կողմերը: Ի՞նչ է պետք մեր բանակին և սահմանին կանգնած զինվորին ուժեղ և վստահ լինելու համար:

- Գիտե՞ք, մեր բանակը ուժեղ է. իմ ընկերներն անպարտելի ոգի ունեն: Մենք պատրաստ ենք ամեն ինչի: Ես շատ գոհ եմ իմ հրամանատարներից. նրանք մեզ հասկանում են ու գնահատում:

- Բանակային կյանքի կամ պատերազմների մասին ի՞նչ գիրք ես կարդացել: Ի՞նչ զգացողությամբ ես համակվել այդ գիրքն ընթերցելուց հետո:

- Դպրոցում և Մանկավարժական համալսարանում շատ գրքեր եմ կարդացել: Հետաքրքիր էր Արցախի արծիվ Մոնթե Մելքոնյանի մասին պատմությունը: Նրա կյանքի դասերը վառ օրինակ են մեզ համար:

- Որպես երաժիշտ՝ քո նպաստը ձեր զորամասին, ինչ-որ առանձնահատուկ բան կհիշե՞ս:

- Հրամանատարը հանձնարարել է գրել զորամասի զինվորական հիմնը: Արդեն ավարտել եմ: Երաժշտությունը ոգևորում է զինվորին, մարդկային հույզեր առաջացնում:

- Մանկավարժական համալսարանում ստացած կրթությունն օգնո՞ւմ է քեզ տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու համար:

- Շատ հպարտ եմ, որ ավարտել եմ Մանկավարժական համալսարանը: Իմ դասախոսներն ինձ ոչ միայն գիտելիք են տվել, այլև մասնագիտական հմտություններ կյանքում ճիշտ կողմնորոշվելու համար:

- Ի՞նչ խորհուրդ կտաս բանակային ծառայության մեկնելու պատրաստվող տղաներին:

- Բանակը կյանքի դպրոց է: Այն կոփում է զինվորին, դարձնում հասուն տղամարդ: Ես գիտեմ, որ Մանկավարժականի տղաները միշտ էլ առաջին գծում են եղել: Մենք հպարտ ենք մանկավարժի մեր կոչումով:

- Ուրիշ ի՞նչ կուզես ասել…

- Արցախը մեր չքնաղ հայրենիքն է: Այն աչքի լույսի պես պիտի պահել ու պահպանել:

Զրույցը՝ Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ՀՊՄՀ գիտական խորհրդի երաշխավորմամբ լույս է տեսել «Տեղեկատվական տեխնոլոգիաները տարրական դպրոցում» ուսումնամեթոդական ձեռնարկը մանկավարժների և ծնողների համար: Ձեռնարկի համահեղինակներն են Աիդա Թոփուզյանը, Ջուլիետա Գյուլամիրյանը, Լուսինե Պողոսյանը, Լաուրա Ասատրյանը, Լ. Անտոնյանը, Մ. Ղազարյանը:
Ուսումնական ձեռնարկը կազմվել է երեխաների՝ համակարգչային կախվածության բացահայտման ուղղությամբ մանկավարժների, ծնողների և երեխաների հետ անցկացված ուսումնասիրությունների վերլուծության արդյունքների հիման վրա. մշակվել են համացանցային կախվածության հիմնական բնութագրիչները և ախտորոշման թեստը սահմանվել են կախվածության կանխարգելման կարգավորմանն ուղղված սոցիալ-մանկավարժական պայմանները:
Տրված են դպրոցում ՏՀՏ-ի մանկավարժականացման գործընթացի համակարգման ու կառավարման մոդելը, համակարգչային կախվածության կանխարգելմանն ուղղված օրինակելի դասեր, ծնողական ժողովների անցկացման սցենարներ:
Ձեռնարկում տեղ են գտել նաև վերոհիշյալ թեմայի վերաբերյալ գիտական հոդվածներ:



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

21-րդ դարը համակարգիչների, տեղեկատվական, հաղորդակցական ու խաղային տեխնոլոգիաների սրընթաց զարգացման ժամանակաշրջան է: Այսօր արդեն ՏՀՏ-երը գործածվում են կյանքի տարբեր ոլորտներում՝ ազդելով մարդկանց ֆիզիկական, հոգեբանական, հոգևոր գործընթացների վրա: Անառարկելի է, որ համակարգչային տեխնոլոգիաների զարգացմանը, խաղային ծրագրերի շուկայի ընդլայնմանը զուգահեռ՝ մեծանում է այն պատանիների ու երեխաների թիվը, որոնք տարված են համակարգչով և համակարգչային խաղերով: Այնուամենայնիվ, երեխաների զարգացման, սոցիալականացման վրա համակարգչի ազդեցության մասին այս ոլորտն ուսումնասիրող գիտնականների կարծիքը միանշանակ չէ, ավելին՝ հակասական է: Գիտնականների մի մասը պնդում է, որ համակարգիչն օգտակար է, մյուս մասը հերքում է այդ տեսակետը, երրորդ խումբն էլ, իրավամբ, պնդում է, որ դրա օգտակարությունը կախված է նրանից, թե ինչ նպատակով և ում ձեռքում է գտնվում այն:

Հայտնի է, որ խաղը երեխայի կյանքն է, նրա զարգացման և սոցիալականացման հզոր միջոցը, սակայն, միաժամանակ, խաղերով տարվածությունը հղի է մի շարք վտանգներով: Մեծահասակների հասարակության պարտքն է կանխարգելել ու կարգավորել երեխաների համակարգչային և խաղային կախվածությունը: Նախ մեծե՛րը պետք է համոզված լինեն, որ իրենց օրինակը վարակիչ է և երեխաների համար ընդօրինակման հզոր միջոց է: Ուստի, այն, ինչ պահանջում ենք երեխաներից, նախ մենք պետք է ինքներս իրականացնենք: Երկրորդ՝ հիշենք, որ երեխային որևէ բան արգելելն անօգուտ է, ուստի բոլոր այն հարցերը, որոնք վերաբերում են երեխայի կյանքին և առօրյային, անհրաժեշտ է քննարկել նրա հետ՝ փոխպայմանավորվածության, երկուստեք համաձայնության պայմաններում: Երրորդ՝ երեխայի գիտակցությանը անհրաժեշտ է հասցնել, որ համակարգիչ ունենալը ոչ թե իրավունք է, այլ առավելություն, արտոնություն, ուրեմն՝ մեծերը կարող են, ավելին՝ պարտավոր են միջամտել դրանից օգտվելու պայմանները կարգավորելու հարցում, քանի որ նրանով տարվելը կարող է սպառնալ մարդու առողջությանը: Ուստի ինչպես ծնողի, այնպես էլ ուսուցչի պարտքն է երեխայի հետ պայմանավորվել համակարգչից օգտվելու կանոնների մասին, երեխայի հետ համատեղ մշակել դրանց օգտագործման պայմանները, ձևերը, բովանդակությունը և դրանից օգտվելու ժամանակը: Չորրորդ՝ պիտի հասնել նրան, որ երեխայի բոլոր գործողությունները լինեն գիտակցված, այլապես մենակ մնալու դեպքում այդ պայմանավորվածությունները կարող են խախտվել: Հինգերորդ՝ ուսուցիչը և ծնողը պետք է գիտակցեն, որ իրենց համագործակցությամբ և միասնական աշխատանքով է պայմանավորված ՏՀՏ-երից երեխաների կախվածության կանխարգելումը: Վեցերորդ՝ ուսուցիչը պետք է համակերպվի համաձևավորողի, ֆասիլիտատորի, իշխանությունը երեխայի հետ կիսելու իր դերերի հետ՝ գիտակցելով, որ ինքն այլևս գիտելիքի միակ և գլխավոր աղբյուրը չէ, նա ունի հզոր մրցակից՝ ի դեմս համակարգչի, համացանցի:

«**Տեղեկատվական տեխնոլոգիաները տարրական դպրոցում**» ուսումնամեթոդական ձեռնարկը բաղկացած է երեք գլխից: Առաջին գլխում, որը վերնագրված է «**Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները և դրանց ազդեցությունները տարրական դպրոցում**», վերլուծվում են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնին կից գործող Մանկության հիմնախնդիրներն ուսումնասիրող լաբորատորիայի կողմից անցկացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները, ներկայացված են ՏՀՏ-երից դպրոցականների կախվածության հետևանքները, այդ երևույթի բնութագրիչները: Առաջարկված ախտորոշիչ թեստը ուսուցիչներին և ծնողներին կօգնի՝ բացահայտելու իրենց երեխայի համակարգչային կախվածությունը և այն որոշելու մակարդակները:

Երկրորդ՝ «**Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների մանկավարժականացման գործընթացի կառավարումն ու իրականացումը դպրոցում**» գլխում ներկայացված են դպրոցի խորհրդի կառուցվածքը, կազմն ու գործառույթները, համակարգչային կախվածության հայտնաբերմանը և կանխարգելմանը նպաստող դասերի նմուշ-օրինակներ, ծնողական ժողովների սցենար, ծնողական կրթության օրինակելի թեմատիկա:

Երրորդ գլխում, որն ունի «**Ուսուցչի և ծնողի անկյուն**» խորագիրը, զետեղված են լաբորատորիայի աշխատողների հոդվածները երեխաների համակարգչային տեխնոլոգիական կախվածության, նրա կանխարգելման մասին, համակարգիչը, համացանցը բնութագրված են որպես ուսումնառության գործընթացի կատարելագործման, սովորողների ճանաչողական հետաքրքրությունների բավարարմանը միտված գործունեության ակտիվացման միջոց, տրված են ուսուցչին և ծնողին հասցեագրված խորհուրդներ, սեմինարների, կլոր սեղանի ժամանակ նրանց կողմից բարձրացված հարցերն ու դրանց պատասխանները:

Հեղինակային խումբը համոզված է, որ ցանկացած հարցում և իրավիճակում երեխայի դաստիարակությունը չի կարող արդյունավետ լինել, եթե ուսուցիչն ու ծնողը չհամագործակցեն, եթե դպրոցն ու ընտանիքը միմյանց չլրացնեն: Այս հիմնավորմամբ էլ ուսումնամեթոդական ձեռնարկում քննարկվող բոլոր հիմնախնդիրները դիտարկված են ուսուցչի և ծնողի միասնական աշխատանքի, սերտ համագործակցության համատեքստում՝ «այն, ինչ սկսվում է դպրոցում, պետք է իր շարունակությունը գտնի տանը, դպրոցն էլ պետք է տեղյակ լինի այն ամենից, ինչը իրականացվել է տանը» կարգախոսով:

Սույն ուսումնամեթոդական ձեռնարկը հասցեագրված է կրթության կազմակերպիչներին, ինֆորմատիկայի, ինչպես նաև տարրական դպրոցի ուսուցիչներին, ծնողներին, մանկավարժական բուհերի ուսանողներին, մեթոդիստներին, հիմնախնդրով հետաքրքրվող բոլոր անձանց:

Հեղինակային խումբը հուսով է, որ ձեռնարկը կնպաստի դպրոց-ընտանիք գործընկերային կապի ամրապնդմանը, տարրական դպրոցի հիմնախնդիրներով շահագրգիռ բոլոր մասնագետների մասնագիտական զարգացմանը և ՏՀՏ-ից երեխաների կախվածության կանխարգելմանն ուղղված մեր բոլորի ջանքերի միավորմանը:

Աիդա ԹՈՓՈՒԶՅԱՆ

ՄԻ ԵՐԳԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Տարիներ առաջ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մանկավարժության և տարրական ուսուցման մեթոդիկաների ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողները կուրսղեկ Ջուլիետա Գյուլամիրյանի առաջարկով կազմակերպեցին Սիլվա Կապուտիկյանին նվիրված ցերեկույթ, որին հրավիրված էր նաև բանաստեղծուհին: Կապուտիկյանական ոգով ու շնչով հագեցած միջոցառման ընթացքում մի խումբ ուսանողուհիներ սիրելի Սիլվային մատուցեցին հաճելի անակնկալ. նրանք կատարեցին Կապուտիկյանի ամենահայտնի բանաստեղծություններից մեկը՝ «Թափառում ենք փողոցներում»-ը, որի համար երաժշտություն էր գրել նույն կուրսի ուսանողուհի Նարինե Պողոսյանը: Երգը բոլորի կողմից հավանության արժանացավ, ընդունվեց շատ ջերմ, իսկ բանաստեղծուհին իր խոսքում ասաց, որ հույս ունի, որ երգը կձայնագրվի և ավելի մեծ լսարան կունենա: Բայց դե դժվար ժամանակներ էին, ուսանողների համար՝ առավել ևս, երգ ձայնագրելն էլ՝ հեռավոր երազանք:

Մենք՝ հեռավոր տյումենցիներս, նույնպես մեր հարգանքի տուրքը մատուցեցինք մեծն բանաստեղծուհուն՝ կազմակերպելով հուշ- երեկո, որի ընթացքում էլ հնչեց այդ երգը: Մեր մշակույթի կենտրոնի ուսուցչուհի Լիանա Դոխոյանը հենց այդ կուրսից է եղել: Նա մեզ պատմեց երգի ստեղծման պատմությունը և ափսոսանքով նշեց, որ այն մնաց իրենց կուրսի «պատերի» մեջ և մի տեսակ իրենց հիմնն է դարձել:

ՀՊՄՀ 1997 թ. շրջանավարտներ, Տյումենի հայկական դպրոցի ուսուցիչներ

Մեր հարցազրույցը հեռակա ուսուցման համակարգի Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության մագիստրատուրայի կուրսի ուսանողուհի Անետա Հովհաննիսյանի հետ՝

Մանկավարժը նախ պետք է մարդ լինի, սիրի երեխաներին...

- Անետա, ինչո՞ւ ես ընտրել հենց Մանկավարժական համալսարանը:

- Ես բազային կրթությամբ ճարտարագետ եմ: Երկրորդ մասնագիտություն ձեռք բերելու համար ընտրեցի Մանկավարժական համալսարանը:

- Քո կարծիքով որքանո՞վ է կարևոր դասախոս-ուսանող անմիջական կապը ուսուցման արդյունավետության գործում:

- Այնքանով է կարևոր, որ եթե սիրում ես դասախոսիդ, սիրով ես հաճախում նրա դասերին, հակառակ դեպքում դասի հաճախելը դառնում է սովորական պարտականությունների կատարում:

- Որո՞նք են ուսանողի սովորելու շարժառիթի անկման և բարձրացման պատճառները:

- Վերը նշված հարցը ուղիղ համեմատական է այս հարցին, ուսանողի սովորելու շարժառիթը դասախոսն է:

- Օգտվու՞մ ես google classroom համակարգից:

- Ժամանակակից տեխնոլոգիաների մեջ ես կարևորում եմ այդ համակարգը:

- Ի՞նչ խնդիրների են բախվում հեռակա համակարգում սովորող ուսանողները:

-Եթե հնարավություն է ընձեռվել առկա համակարգում սովորելու, ապա պետք է օգտվել, հնարավորինս շատ գիտելիքներ ձեռքբերելու պատեհ առիթը բաց չթողնել: Այս համակարգում ավելի շատ ես շփվում պրոֆեսորադասախոսական կազմի հետ, ինչից հետևում է, որ առկա համակարգը ստիպում է քեզ ամեն օր կարդալ և սովորել, իսկ հեռակայի դեպքում այդպես չէ. ամբողջ նյութը միանգամից է հանձնարարվում և այդքան կարճ ժամանակում հնարավոր չէ յուրացնել:

- Որո՞նք են Մանկավարժական համալսարանի առավելություններն ըստ քեզ:

- Կարծում եմ բոլոր բուհերի կնքամայրը հենց մանկավարժական համալսարանն է: Այստեղ պատրաստում են այն մասնագետներին, ովքեր պետք է կրթեն ապագա բժիշկներին, իրավաբաններին, ինժեներներին, տնտեսագետներին: Եթե այս համակարգում ինչ-որ բան թերանա, ապա այն կանդրադառնա մնացյալ բոլոր մասնագիտությունների վրա:

- Եթե հնարավորություն ունենայիր փոխել կամ ավելացնել ինչ-որ բան, ի՞նչ նոր առաջարկներով հանդես կգայիր:

- Քանի որ բուհի մագիստրատուրայում սովորում են նաև այնպիսի ուսանողներ, ովքեր բազային կրթությամբ մանկավարժներ չեն, կառաջարկեի հոսքային խմբեր ստեղծել, որպեսզի այն ուսանողներին, որոնք այս բուհը չեն ավարտել, գոնե ամփոփ կերպով ներկայացվեր այն առարկայի ուսուցման մեթոդիկան, որը նա պետք է դասավանդի դպրոցում:

- Իսկ ինչպիսի՞ն պետք է լինի մեր օրերի մանկավարժը:

- Մանկավարժը նախ պետք է մարդ լինի, սիրի երեխաներին, զբաղվի ինքնակրթությամբ և լինի ստեղծագործող:

Զրույցը՝ Սյուզի Կղմեսյանի

Ներառականությունը մտածելակերպ է

Ներառականությունը վայր չէ, փորձ չէ ու մարդ չէ. այն մտածելակերպ է, իրավունք է, ոչ թե առավելություն: Ներառականությունը գործընթաց է, որից բոլորս ենք շահում:

Նախ հասկանանք, թե ինչ է ներառականությունը: Բառ, որը գրեթե մարդկանց մեծամասնությանը ծանոթ չէ: Ներառական կրթության նպատակը մեկն է՝ հավասար կրթություն ապահովել զարգացման տարբեր խնդիրներ ունեցող երեխաների համար: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մոտ հանդիպող զարգացման խնդիրները բազմաթիվ են, և այսօր այդպիսի երեխաների թիվը, ցավոք, գնալով աճում է:

Երբ երեխան ստանում է ներառական կրթություն, միանշանակ չենք կարող ասել, որ ընդհանուր կրթական ծրագիրը յուրացնում է ամբողջովին, այլ իր հնարավորությունների չափով, բայց մեծ չափով նկատելի է անհատական աշխատանքի ազդեցությունը երեխայի հոգեկան հավասարակշռության վրա: Բացի այն հանգամանքը, որ երեխան չի սահմանափակվում և կաշկանդվում, դարձնում է երեխային ավելի ակտիվ, քան նախկինում էր: Դա երեխաների հետ շփման արդյունքում է ձևավորվում: Անշուշտ, խոչընդոտներ առաջանում են դասընթացները կազմակերպելիս՝ պայմանավորված երեխայի խնդրով: Շատ երեխաների անգամ դպրոց հասցնելն է բարդ, և հարցը միայն թեքահարթակների բացակայությունը չէ: Ներառականությունը չի նշանակում, որ երեխային տանես դպրոց, հետո վերցնես ու բերես տուն: Եթե համակարգը ներառականություն է ենթադրում, ուրեմն երեխան իսկապես պետք է ներառվի և գոնե դպրոցում սայլակով տեղաշարժվելու հնարավորություն ստանա:

Յուրաքանչյուրս կարող ենք տեսնել, թե կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները, ինչ հաջողություններ են ունենում դպրոց մտնելիս: Այդպես լուծվում է սոցիալիզացման խնդիրը, ինչն էլ նպաստում է երեխայի կրթության որակի բարձրացմանը և կոտրում այն կարծրատիպը, թե այդ երեխայի հնարավորությունները սահմանափակ են: Երեխան նախ իրեն, և հետո ընտանիքին է ապացուցում, որ կարող է և աստիճանաբար բոլորը գիտակցում են այն հանգամանքը, որ ներառականության մասին գաղափարը ճիշտ է: Մենք պետք է ընդունենք, որ «ներառական կրթություն» հասկացությունը չպետք է վերագրենք միայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, հուզականային ոլորտի հետ կապված շատ խնդիրներ կան, որոնց մեջ երեխան պարբերաբար կարող է հայտնվել, և միևնույն ժամանակ կընկնի նրա սովորելու մակարդակը:

Ի՞նչ պետք է անենք այս դեպքում, եթե նա ներառված երեխա չէ և վե՞րջ: Սա ընդհանուր մոտեցում է, որը ներմուծելով հնարավոր է փոխել բոլորի վերաբերմունքը:

Ցանկացած երեխա, որն ունի յուրահատուկ մոտեցման կարիք, անկախ նրանից՝ աուտի՞զմ, թե՞ մանկական ուղեղային կաթված ունեցող է, պետք է միանշանակ ստանա կրթություն բոլորի հետ:

Այսօր դպրոցների գերակշռող մասում պահպանված է «ներառական երեխա» հասկացությունը, ինչը սխալ է, պետք է մարդկանց միջից արմատախիլ անել այն պատկերացումը, թե այս երեխան ներառված է, մյուսը՝ ոչ:

Իհարկե, ներառականությունը ճիշտ գաղափար է և բոլորովին էլ հերոսություն չէ, որ պետությունը թույլ է տվել նման երեխաներին մյուսների հետ դպրոց հաճախել:

Մադլեն ՄԻՆԱՍՅԱՆ
Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետ , լոգոպեդիա բաժնի 2-րդ կուրս

Հիացրին ֆրանսիացի ունկնդիրներին

2019 թվականի հունվարի 17-22-ը Ֆրանսիայի Փարիզի Բլուա քաղաքում անցկացվեց երաժիշտ կատարողների հերթական ամենամյա մրցույթը: Այս անգամ աշխարհի տարբեր երկրների 105 մասնակիցներից մրցույթի 6 մրցանակներից 4-ը բաժին հասավ հայ երաժիշտ կատարողներին: Երկու հայ մրցանակակիրները Չեխիայի մայրաքաղաք Պրահայից էին, մեկը՝ Աբու-Դաբիից, իսկ մեկը Երևանի հմ. 1 արվեստի դպրոցի 3-րդ դասարանի աշակերտ Մինաս Աբրոյանն էր: Մինասը մեր բուհի երաժշտական մանկավարժության ամբիոնի դոցենտ Լիլի Խաչատրյանի թոռնիկն է: Նրա փայլուն նվագակցության և կատարողական վարպետության շնորհիվ Մինասի՝ շվիով կատարումները նվաճեցին 3-րդ մրցանակ՝ պատիվ բերելով մեր երկրին ու համալսարանին:

Նվագացանկում ընդգրկված էին Սայաթ-Նովայի «Քանի վուր ջան իմ», Կոմիտասի «Վաղարշապատի պարը», Գրիգոր Հախինյանի «Ինտերմեցցոն» և Շմիտցի «Անցյալի հիշողությունները» ստեղծագործությունները: Մինասը շվիահար Աշոտ Մինասյանի սանն է: Հավելենք նաև, որ անցյալ տարի Իտալիայի Պեզարո քաղաքում նա և Լիլի Խաչատրյանը արժանացան մրցույթի երաժիշտ կատարողների 2-րդ մրցանակին:

Ֆրանսիացի ունկնդիրները Մինասին գրկելով՝ բացականչում էին՝ «Armenie, Aznavour»…

Իսկ մի հայ կին, որն արդեն 15 տարի ապրում է Ֆրանսիայում, հրավիրեց իր տուն՝ Շատո թագավորական քաղաք:

Ժյուրին երևանցի հայ երաժշտին հանձնեց նաև «Ունկնդիրների համակրանքի մրցանակը»՝ ֆրանսիական դասական երաժշտության ձայնասկավառակ:

Հայ երաժշտությունը և հայկական շվին հիացրին օտար ունկնդիրներին և արժանացան մեծ ճանաչման և գնահատանքի:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Ռաշիդ Պատվականյանը ծնվել է Մեղրու շրջանի Շվանաձոր գյուղում, 1920 թվականին: Միջնակարգ կրթությունը ստացել է Երևանում, եղել է բարեխիղճ կոմերիտական, 1938 թվականին ընդունվել է Մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը, սովորելու ընթացքում պարգևատրվել է պատվոգրերով ու շնորհակալական թերթիկով:

1941 թ.-ին, երբ ֆաշիզմի հրոսակները բարբարոսաբար սկսեցին ավերացություններ անել, նա երրորդ կուրսից զորակոչվեց բանակ, սովորեց Լենինականի, այնուհետև Սուխումիի սպայական ուսումնարանում և անմիջապես մեկնեց գործող բանակ: Նա կռվում էր 10-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի կազմում և իր վաշտի հետ միասին մասնակցեց Թերեք-Կուբան-Զապորոժիե գծի ազատագրմանը: Այստեղ ծանր վիրավորվում է, բուժվում Երևանի հոսպիտալում և անմիջապես մեկնում իր զորամաս:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆԻ ՀԵՐՈՍ ՈՒՍԱՆՈՂԸ

ՀՊՄՀ թանգարանը հերթական անգամ համալրում է իր հավաքածուն նոր տեղեկատվությամբ և առարկաներով: Այս անգամ թանգարանի ձեռքբերումն է ՀՊՄՀ թանգարանի ուսանող, Առաջին համաշխարհային պատերազմի մասնակից Ռաշիդ Պատվականյանի ընտանիքի անդամների կողմից թանգարանին հանձնած նամակները՝ գրված ընտանիքի անդամներին, Մանկավարժական ինստիտուտի կողմից տրված ուսանողական գրքույկը, լուսանկարները և այլն:

1943 թվականի հոկտեմբերի 16-ին նա մորն է գրում իր վերջին նամակը, որից մի քանի օր անց հերոսաբար զոհվում է Զապորոժիեի մարզի Տոկմակսկի շրջանի Կոխանի գյուղի մոտակայքում և թաղվում տեղի եղբայրական գերեզմանոցում:

Ահա ևս մի կենսագրություն, որը պատիվ է բերում մեր համալսարանին:

Ռաշիդ Պատվականյանի անձնական իրերը կարելի է տեսնել ՀՊՄՀ թանգարանում:

ԷՄՄԱ ԱՐՏԱՇԵՍԻ ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ

Մահացել է մանկավարժական հոգեբանության ասպարեզում ճանաչված և մեծ ներդրում ունեցող գիտնական, միջազգային մի շարք հոգեբանական ընկերությունների անդամ Էմմա Արտաշեսի Ալեքսանդրյանը: 1956 թվականից հետո նրա կյանքի ընթացքը սերտորեն կապվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական Մանկավարժական ինստիտուտի հետ:

Բժշկի և մանկավարժի ընտանիքում 1927 թվականին ծնված աղջկա կենսագրությունը տարիների հետ պիտի հարստանար կրթության ասպարեզի տարբեր ուղղությունների ուսումնասիրությամբ և հայրենիքում ու արտերկրում սեփական փորձի ներդրմամբ:

Միջնակարգ կրթությանը զուգահեռ ստանալով երաժշտական կրթություն՝ Է. Ալեքսանդրյանը ընդունվել և գերազանցությամբ ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների մանկավարժական ինստիտուտը: Աշխատել է մանկապարտեզի երաժշտական դաստիարակ, ապա անգլերեն դասավանդել դպրոցում: Աշխատանքային առաջին մմկրտությունից հետո նա ընդունվել է Մոսկվայի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրան՝ նախադպրոցական մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտությամբ:

1956 թվականին հաջողությամբ պաշտպանելով թեկնածուական թեզը՝ նա դասախոսական աշխատանքի է անցել Խ. Աբովյանի անվան հայկական պետական Մանկավարժական ինստիտուտում՝ 1961-ին արդեն ընտրվելով բուհի նախադպրոցական մանկավարժության և հոգեբանության ամբոնի վարիչ:

1970 թվականին է. Ալեքսանդրյանը Մոսկվայում պաշտպանել է դոկտորական թեզ՝ դառնալով հոգեբանական գիտության գծով առաջին կին դոկտորը Հայաստանում:

1962-ին ստացել է դոցենտի, իսկ 1971-ին՝ պրոֆեսորի գիտական կոչումներ: 1972-ին արդեն նշանակվել է Բարձրագույն ատեստացիոն հանձնաժողովի անդամ՝ հոգեբանական գիտությունների գծով:

Նրա գիտական ժառանգության մեջ առանձնակի տեղ են գրավում վաղ օնտոգենեզում սենսոր պրոցեսների զարգացման առանձնահատկություններին նվիրված մենագրությունը, ծնողների համար հրատարակած գիրքը և մի շարք դասագրքերը, տարբեր երկրներում՝ Հայաստանում, Ռուսաստանում, Վրաստանում, Ուկրաինայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում, Ճապոնիայում, Ալժիրում, ԱՄՆ-ում, Չեխոսլովակիայում, Բուլղարիայում տպագրված ավելի քան 80 հոդվածները:

1988 թվականին Սպիտակի երկրաշարժի առաջին իսկ օրից բուհի նախադպրոցական մանկավարժության և հոգեանության ամբոնին կից ստեղծվեց Հայաստանում առաջին հոգեբանական օգնության վերականգնման կենտրոնը: Հետագայում բազմաթիվ երկրների հոգեբաններ բարձր գնահատեցին կենտրոնում կիրառվող արդյունավետ մեթոդները և աշխատանքի արդյունքները, կենտրոնի մասին Անգլիայում և ԱՄՆ-ում նկարահանվեցին ֆիլմեր, իսկ հմուտ հոգեբանը արտերկրի տարբեր երկրներում հանդես եկավ զեկուցումներով: Հետագայում նա մասնակցեց տարբեր ծրագրերի, աշխատեց Չիկագոյում և այլուր:

Անվանի հոգեբանի վաստակը և մանկավարժական բուհում երկարամյա գործունեությունը գնահատվել է կառավարական ու տարբեր պարգևներով: 2011 թվականին նա արժանացել է ՀՊՄՀ «Խաչատուր Աբովյան» մեդալի՝ գիտության և կրթության ոլորտում ունեցած ակնառու ծառայությունների և համալսարանում ունեցած մեծ ավանդի համար: Բայց ամենամեծ գնահատանքն այն է, որ ուսանողները շարունակում են գիտնականից ստացած մասնագիտական որակները փոխանցել նոր սերնդին:

Նկարչի արվեստանոցում՝ նկարչի աչքերով

Հիշում եմ, երբ շատ փոքր էի, նստում էի սեղանի մոտ, դիմացս դնում բաժակ և փորձում նկարել այն: Եվ գիտե՞ք ինչու էի այդպես անում, քանի որ ասում էին առաջին քայլս փորձեմ անել փոքր, որպեսզի հետո հեշտ լինի: Իսկ երբ ստացվում էր նկարել գոնե բաժակի բռնակը՝ աշխարհը իմն էր լինում: Ընկնում էի երազանքների գիրկը. ես արդեն հայտնի նկարչուհի եմ, և ցուցադրվում են իմ նկարները: Որքան բան ունեմ պատմելու իմ առաջին աշխատանքի մասին. բաժակիս... չէ, ավելի ճիշտ բաժակի բռնակի մասին:

Բայց հանկարծ մայրս գալիս է և վերցնում բաժակը, քանի որ դա պապիկիս սիրելի բաժակն է, նա միայն դրանով է գինի խմում:

Գիտե՞ք, ես միշտ էլ տխուր ժամանակ նկարել եմ: Հա՛, բայց խնդրում եմ չպատկերացնեք հեքիաթային ինչ-որ բան, դա ուղղակի խզբզոց էր: Բայց և այնպես ես միշտ նկարին նայելով, որքան էլ որ այն խզբզոց է եղել, գիտեի, թե կոնկրետ որ գիծը ինչ պատմություն ունի, հենց այնպես ոչինչ չէր արված:

Եվ մի անգամ էլ պատկերացրել էի ինձ իմ նկարչական արվեստանոցում: Նկարում էի շատ հանգիստ, բայց միևնույն ժամանակ շատ ագրեսիվ: Դե այնպես, ինչպես տեսել էի կինոներում: Բայց գիտե՞ք ինչով էր տարբերվում իմ արվեստանոցը կինոների մեջ տեսածիցս. ամենուր նկարներ չէին, գեղեցիկ պատկերներ չկային, շատ չէին նաև այն «գործիքները», որոնք պետք է ունենա նկարիչը: Փոքրիկ է իմ սենյակը, համեստ, պատուհանս քառակուսի չէ, այլ եռանկյունաձև, առաստաղը, ինչպես նաև պատերը փոքր-ինչ կորություն ունեն: Ընդհանրապես նման չեն սովորական պատի կամ առաստաղի, և գիտե՞ք ինչու է այդպես, քանի որ նկարելու ժամանակ թղթին ես հանձնում այն ամենը, ինչ-որ դու ինքդ էս ապրում ու զգում. հույզերդ, ապրումներդ, ուրախությունդ ու տխրությունդ, այդ ներսումդ կուտակված փոթորիկը, քամին, մրրիկը և, ինչու չէ, պայծառ արևը և կապույտ, անամպ երկինքը: Իսկ ա՛յ նկարները, բոլորը պահված են աջ կողմի պահարանի մեջ: Երևի հետաքրքիր է, թե ինչու է այնտեղ, դա էլ ասեմ, քանի որ չեմ ուզում, որ մեկը մյուսին նման պատկերներ լինեն: Ուզում եմ, որ նայեմ և յուրաքանչյուրի մեջ առանձին պատմություն տեսնեմ, հուզմունք, ապրում, երջանիկ րոպե, ուրախ թրթիռ, երազկոտ փոքրիկ սիրտ, խառնիճաղանջ հոգի և, վերջապես, ինձ տեսնեմ տարբեր ժամանակահատվածներում, փորձեմ հասկանալ ինձ:

Իմ փոքրիկ «տնակում» այնքա՜ն մաքրություն և անմեղություն կա: Սիրում եմ, որ այնտեղ լինեմ միայն ես: Գիտե՞ք ինչու. երբ խոսում եմ՝ ճիշտ լինեմ թե սխալ, անկախ ամեն ինչից՝ ինձ սխալ հասկացող կամ քննադատող չկա: Դե, իհարկե, համամիտ եմ, կցանկանայի կողքիս լիներ հարազատ, հոգուս և սրտիս բարեկամ մեկը, ով կփորձեր գոնե մի փոքր դրությանս մեջ մտնել և կիսել այդ վայրկյանը:

Գիտե՞ք որքան հաճելի է ուրախ վազելով գալ, բացել դուռը. մի կողմից արևն է շողում, մի կողմից կտավն է ծյունաճերմակ ժպտում, մատիտն է քաղցր ձայնով կանչում, դե, իսկ ճնճղուկների մասին ավելորդ է խոսելը. նրանք գիտեն, թե երբ ինչ են երգում: Այնքա՜ն երջանիկ եմ զգում, որ ձեռքս չի կարողանում պարը թողնել և նկարել, միտքս բացի պարային շարժումից ոչիչ չի անում:

Բայց ահա լսվում է մի ձայն .

- Աստղի՛կ, հերիք է սեղանին քնես, կմրսես:

Աստղիկ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ
Չարենցավանի պետական քոլեջի ուսանողուհի

ՄԵՐ ՆԱՄԱԿԱՆԻՆ

Օրվա խորհուրդը՝ հայկական ջերմ մթնոլորտում

Ամբողջ աշխարհում սփռված հայերի ու հայկական սփյուռքի համար կարևորագույն հաստատություններն են եկեղեցին ու դպրոցը, որոնք հայ ներկա և ապագա սերունդների ինքնության պահպանման ու ամրապնդման գրավականն են: Հունվարի 13-ին Հին Նոր տարվա նախաշեմին ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի սաներն անցկացրին արդեն ավանդույթ դարձած 31-րդ միջոցառումը՝ նվիրված Սուրբ Ծննդին: Ինչպես միշտ, այն անցկացվեց Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդանիստ Սուրբ Պայծառակերպություն տաճարում:

Ներկաներին ջերմորեն ողջունեցին Ռուսաստանի Դաշնության և Նոր Նախիջևանի հայոց թեմի փոխառաջնորդ Տեր Հարություն աբեղա Կիրակոսյանը և Միքայել սարկավագ Փարսադանյանը: Հոգևորականները պատմեցին Սուրբ Ծննդի խորհրդի և հայկական ավանդույթների մասին, պատասխանեցին ներկաների հարցերին, այնուհետև հայերեն արտասանեցին «Հայր մեր» աղոթքը: Անշուշտ, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տեր Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի օրհնությունը, հուշանվերները, օրհնված ջուրը, ինչպես նաև իմաստուն քարոզը, արժեքավոր խորհուրդները դեռ երկար կմնան «Վերածնունդ»-ի սաների և նրանց ծնողների հոգիներում և հիշողություններում:

Այնուհետև Միքայել սարկավագ Փարսադանյանը հայրենակիցներին ծանոթացրեց հայկական եկեղեցական համալիրի գեղեցիկ և տոնական զարդարված տարածքի հետ, որից հետո ուղեկցեց նրանց Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի «Տապան» թանգարանը, որի հոգևոր առաջնորդն է հայր Սեպուհ Ամիրյանը: Այնտեղ ևս կազմակեպվեց հետաքրքիր էքսկուրսիա, որը վարեց պատմաբան-կովկասագետ, էքսկուրսավար Արտյոմ Ենոքյանը: Հատկանշական է, որ թեմատիկ ձևավորված սրահների ցուցադրությունը և թանգարանի տեխնիկական հագեցվածությունը (տնօրեն, նկարիչ՝ Դավիթ Բաղդասարյան) հնարավորություն ընձեռեց Ա. Ենոքյանին՝ ինտերակտիվ կերպով ներկաների ուշադրությունը հրավիրելու առանցքային փաստերի վրա, որոնք կապված են հայ ժողովրդի հնագույն պատմության, մշակույթի և ավանդույթների հետ:

Միջոցառման վերջում «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցի տնօրեն, մանկ. գիտ. թեկնածու Շողիկ Փահլևանյանի խնդրանքով աշակերտներն այցելեցին նաև Սուրբ Գրիգոր Նարեկացու անվան գրադարան, որտեղ պահվում է մոտ վեց հազար գիրք, այդ թվում՝ մանկական և անտիկ: Ընդ որում, մատենագետ և գրադարանի տնօրեն Արուսյակ Ավոյանն իր խոսքում նշեց, որ բոլոր նմուշները և պարբերականները խնամքով ընտրված ու դասավորված են չորս հիմնական ուղղություններով՝ եկեղեցական, հայագիտական, պատմական, գեղարվեստական:

Միջոցառման վերջում աշակերտներն ու նրանց ծնողները իրենց երախտագիտության խոսքը հղեցին միջոցառման կազմակերպիչներին ու աջակիցներին՝ իրենց հայկական գեղեցիկ, ջերմ ու տոնական օր պարգևելու համար:

Հունվարի 20-ին Մոսկվայում Հայաստանի դեսպանատանը գործող կիրակնօրյա «Վերածնունդ» դպրոցում կազմակերպվել էր հանդիպում նկարիչ, գծանկարիչ, դիզայներ և քանդակագործ, Հայկական մշակույթի զարգացման հիմնադրամի նախագահ Աշոտ Թադևոսյանի հետ: Դպրոցի աշակերտները ներկայացրին «Արև և սեր» մրցույթի շրջանակներում իրենց ստեղծագործական աշխատանքները:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի երաշխավորությամբ լույս է տեսել մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջուլիետա Գյուլամիրյանի և Արմինե Միքայելյանի հեղինակած «Մանկավարժական պրակտիկան տարրական դասարանների ուսուցիչների պատրաստման համակարգում» ձեռնարկը:

«Մանկավարժական պրակտիկայի հիմնական նպատակը տարրական դասարանի ուսուցչի մանկավարժական գործունեության ազատ և բազմակողմանի զարգացումն ապահովող բոլոր ձևերի միավորումն է ուսանողների մասնագիտական պատրաստման ամբողջական գործընթացում»,- ասվում է ձեռնարկի ներածության մեջ:

Ուսումնաօժանդակ ձեռնարկում ներկայացված են մանկավարժական բուհում պրակտիկայի բոլոր շրջափուլերի բովանդակությունը, խնդիրները և դրանց իրականացման ձևերը: Ներկայացված են նաև մանկավարժական պրակտիկայի բոլոր մասնակիցների գործառույթների իրականացման ուղիները:

Նշված ցուցումները կարող են կիրառվել մանկավարժական բուհերի դասախոսների և ուսանողների, կրթական հաստատությունների ղեկավարների, պրակտիկայի պատասխանատուների, ուսուցիչների և, ընդհանրապես, կրթական ոլորտում աշխատող մանկավարժների կողմից:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողների 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի ուսման վարձի զեղչի դիմումները համապատասխան փաստաթղթերով ընդունվում են հունվարի 8-ից փետրվարի 1-ը:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 29.01. 2019 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ